ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ- 2

ՀԱԿՓԲԸ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով «Հայավտոկայարան»ՓԲԸ կարիքների համար իրավաբանական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ ՀԱԿՓԲԸ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.12.2020թ. ժամը 12-00-ին, Վերին Պտղնի Երևան-Սևան մայրուղի 2/14 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Աբրահամյան, գնահատող հանձնաժողովի անդամներ Ք.Բաբայանը, Մ.Կարապետյանը, Լ.Ստեփանյանը, Մ.Ղամբարյանը և քարտուղար Հ.Բարղությանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

ՀՀ ՀԱԿՓԲԸ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Աբրահամյանը տեղեկացրեց, որ ՀՀ ՀԱԿՓԲԸ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ԱԷԿՎԻՏԱՍ» ՍՊԸ-ն (գ.Այգեզարդ,Պ.Սևակ 42)
2. «Լեքսհաբ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Քրիստափորի 9, բն 23)
3. «Աքյուրըթ Թրանսլեյշնս» ՍՊԸ-ն (ք.Երևան, Ավան-Առինջ, 1-ին մկր. 1/7, բն.15)
4, «Լաճ Գրուպ» ՍՊԸ (ք.Երևան, Կիևյան 13,բն,12)
5. «ԱԶՈՒՌ» ՍՊԸ (ք.Երևան, Սևան 42/1)
6. «Լեգիտիմուս» ՍՊԸ (ք.Երևան, Աբովյան 34)
7. «Գլոբալ Փրովայդեր» ՍՊԸ (ք.Երևան, Աբելյան 6/4)
8. «Աութսորս» ՍՊԸ (ք.Երևան, Սարմենի 1, 2/1)
9. Ա/Ձ Սահակյան Էդուարդ (ք.Երևան, Նազարբեկյան թաղ.,1բ-31)
10. «Ահարոնյան լո ֆիրմ» ՍՊԸ (ք.Երևան, Կ.Ուլնեցու 31/3)
11. «Հայենդ սլուշնս» ՍՊԸ (ք.Երևան,Շահումյան 6, 1 նրբ.տուն 5)
12. Ա/Ձ Իրինա Հակոբյան (ք.Երևան, Ե.Քոչարի 19/2)

2.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Չ/Հ	Մասնակիցների անվանումները	Ծառայության անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			Պլանավորված առավելագույն ընդհանուր գինը ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«ԱԷԿՎԻՏԱՍ» ՍՊԸ	Իրավաբանական ծառայություն	3 000 000	0%	3 000 000	3 000 000
2		«Լեքսհաբ» ՍՊԸ		4 500 000	0%	4 500 000	
3		«Աքյուրըթ Թրանսլեյշնս» ՍՊԸ		2 800 000	0%	2 800 000	
4		«Լաճ Գրուպ» ՍՊԸ		10 000 000	0%	10 000 000	
5		«ԱԶՈՒՌ» ՍՊԸ		4 629 625	20%	5 555 550	
6		«Լեգիտիմուս» ՍՊԸ		2 575 000	0%	2 575 000	
7		«Գլոբալ Փրովայդեր» ՍՊԸ		6 000 000	0%	6 000 000	
8		«Աութսորս» ՍՊԸ		2 700 000	0%	2 700 000	
9		Ա/Ձ Սահակյան Էդուարդ		2 640 000	0%	2 640 000	
10		«Ահարոնյան լո ֆիրմ» ՍՊԸ		9 600 000	0%	9 600 000	
11		«Հայենդ սլուշնս» ՍՊԸ		5 000 000	0%	5 000 000	
12		Ա/Ձ Իրինա Հակոբյան		3 000 000	0%	3 000 000	

4. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի վերաբերյալ կատարվել են 2020 թվականի դեկտեմբերի 18-ին հարցումներ և դրանց վերաբերյալ 2020 թվականի դեկտեմբերի 21-ին տրվել են պարզաբանումներ՝

Հարցադրում N 1. Տեխնիկական բնութագրի ուսումնասիրումից պարզ չէ, թե ի՞նչ ծավալի աշխատանքի մասին է խոսքը:

Պարզաբանում N 1. Ներկայումս «Հայավտոկայարան» ՓԲԸ-ն ունի երկու տասնյակից ավել դատական գործեր, որոնք, սակայն, ավելանալու են՝ կապված դեբիտորական պարտքերի հավաքագրման մեխանիզմների մշակման հետ (ոչ ավել, քան 50 գործ):

Հարցադրում N 2. Խնդրվում է պարզաբանել «Իրավաբանական փաստաթղթերի կազմում» բնութագրիչի շրջանակում հատկապես ի՞նչ բնույթի փաստաթղթերի կազմման մասին է խոսքը և ի՞նչ ծավալ է ակնկալվում:

Պարզաբանում N 2. Իրավաբանական փաստաթղթերի կազմում ասելով նկատի է առնվում այն բոլոր փաստաթղթերը, որոնց համար պետք է իրավաբան մասնագետների միջամտությունը և բխում է նրանց մասնագիտական ունակություններից (օրինակ՝ հայցադիմումներ, վճարման կարգադրություններ, կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումներ, այլ իրավական վերլուծություններ պահանջող գրություններ): Ծավալները կապված են անհրաժեշտության առաջացման հետ (հիմք ընդունելով պրակտիկան՝ ոչ ավել, քան շաբաթվա մեջ 5 անգամ):

Հարցադրում N 3. Բացի այս, տեխնիկական բնութագրի պահանջներից հետևում է, որ Պատվիրատուն ցանկանում է իրավաբանական օգնություն ստանալ ինչպես արտադատական վեճերի, այնպես էլ՝ դատական վեճերի ժամանակ: Խնդրում ենք հնարավորության դեպքում նշել նշված գործերի մոտավոր քանակը կողմնորոշվելու համար և հստակեցնել դատական ծախսերի բաշխման հարցը:

Պարզաբանում N 3. Արտադատական վեճերը կարող են լինել ինչպե՛ս հաշտարարական և արբիտրաժային, այնպե՛ս էլ բանակցային՝ առանց վերոհիշյալ սուբյեկտների մասնակցության: Ընկերությունը ներկայումս չունի հաշտարարական և արբիտրաժային գործեր, վեճերի լուծման համար միտված է բանակցային լուծումներ գտնել:

Եթե դատական ծախս ասելով նկատի է առնում դեպի դատարան փոխադրման, փոստային առաքման և այս բնույթի ծախսերը, ապա դա իրականացվում է կատարողի կողմից, իսկ պետական տուրքը վճարվում է պատվիրատուի կողից:

Հարցադրում N 4. «Պարտքերի հետգանձման խնդիրներ» բաղադրիչում արդյո՞ք ակնկալվում է միայն իրավաբանական խորհրդատվության տրամադրում, թե՞ այս բաղադրիչը ենթադրում է, որ փաստաբանական գրասենյակը պետք է իրականացնի նաև պարտքերի հավաքագրումը արտադատական կամ դատական ճանապարհով:

Պարզաբանում N 4. Պարտքերի հետգանձման խնդիրներ ասելով ակնկալվում է պարտքերի հավաքագրումը արտադատական և/կամ դատական ճանապարհով:

Հարցադրում N 5. Խնդրվում է մանրամասնել նաև «Աշխատանքային վեճեր» բաղադրիչը: Ձևակերպումը բավական լայն է: Արդյոք խոսքը վերաբերում է իրավաբանական խորհրդատվություն տրամադրելուն, թե ակնկալվում է որոշ դեպքերով վեճերի լուծումը հանձնել դատարանի քննությանը: Խնդրում ենք հստակեցնել և ներկայացնել ակնկալվող աշխատանքների հնարավոր ծավալը:

Պարզաբանում N 5. Աշխատանքային վեճեր ասելով ակնկալվում է աշխատանքային վեճերի մասով խորհրդատվության տրամադրում, ինչպես նաև վեճերի լուծում դատական ճանապարհով: Ներկայումս ուներությունը ունի 4 աշխատանքային դատական վեճ:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «ԱԷԿՎԻՏԱՍ» ՍՊԸ, «Լեքսհաբ» ՍՊԸ, «Աքյուրըթ Թրանսլեյշնս» ՍՊԸ, «Լաճ Գրուպ» ՍՊԸ, «ԱՋՈՒՌ» ՍՊԸ «Լեգիտիմուս» ՍՊԸ, «Գլոբալ Փրովայդեր» ՍՊԸ, «Աութսորս» ՍՊԸ, Ա/Ձ Սահակյան Էդուարդ, «Ահարոնյան լո ֆիրմ» ՍՊԸ, «Հայենդ սլուշնս» ՍՊԸ, Ա/Ձ Իրինա Հակոբյանճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ:
2. Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին ՀՀ ՀԱԿՓԲԸ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով գնման հրավերի 8.7 կետի համաձայն հրավիրել գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունների, քանի որ ՀՀ ՀԱԿՓԲԸ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով գնման ընթացակարգը իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:
3. Նիստը վերսկսել՝ 2020 թվականի դեկտեմբերի 29-ին, ժամը 09:30-ին և գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունները կազմակերպել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, Վերին Պտղնի Երևան-Սևան մայրուղի 2/14 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Աբրահամյան

Անդամներ՝ Ք.Բաբայան

Մ.Կարապետյան

Լ.Ստեփանյան

Մ.Ղամբարյան

Քարտուղար՝ Հ.Բարղության